ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/55 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

(իրականացված հարցման կարգով)

Քաղ. Երևան 15 հունիսի 2020թ.

2020թ-ի հունիսի 4-15-ը տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/55** ծածկագրով (Օդորակիչի և օդորակիչի կոմպրեսորների) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Դ. Մադոյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Տեխնիկական տնօրենի պ/կ.
Ս. Չիդեմյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԿՏԱ-ի պետ.
Ա. Ստեփանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԿՏԱ-ի պետի տեղակալ նորոգումների գծով.
Լ. Օհանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Հաշվապահական ծառայությունների ավագ հաշվապահ.
Ա. Վարդապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Իրավապայմանագրային բաժնի պետ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Արմինե Ավետիսյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դ. Մադոյանը, իսկ քարտուղարն էր՝ Արմինե Ավետիսյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/55** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:

2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/55 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Դ. Մադոյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Օդորակիչի կոմպրեսոր	2117000
2.	Օդորակիչի կոմպրեսոր	2160000
3.	Օդորակիչի կոմպրեսոր	621000
4.	Օդորակիչ	127000

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/55 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով: ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ կետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/55 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	ՆՈՎԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ	ք. Երևան, Վրացական 7, բն.8	novatradeam@gmail.com
2	ԱՁ Գրիգոր Այվազյան	Արարատի մարզ, գ. Ոստան, Թեիլերյան 14	xachagir@mail.ru
3	ԿՌ Պրոջեկտս ՍՊԸ	Գ. Մխչյան, Շահումյան 23	krprojectsllc@gmail.com
4	Էյչ վի էյ սի Սերվիս ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Սուրենավան Արցախի 15 տ.	hvac.service.armenia@gmail.com

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/55** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ ԿՌ Պրոջեկտս ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում սխալ ծածկագիր է գրված, և Էյչ վի էյ սի Սերվիս ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված գնային առաջարկի՝ Հավելված 2-ի, 3-րդ չափաբաժնի մասով ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով և թվերով նշված գումարների հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի սյունակում տառերով և թվերով նշված գումարին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի	Մասնակցի	Մասնակիցների առաջարկած գները՝

համարը	Նախահաշվային գին	Զբաղեցրած տեղ	Ընտրված մասնակցի դեպքում նշվում է «X»	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	**2117000**	**1**	X	ՆՈՎԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ	1345000	1345000
		2		ԿՌ Պրոջեկտս ՍՊԸ	1680833	2017000
		3		Էյչ վի էյ սի Սերվիս ՍՊԸ	1762500	2115000
2	**2160000**	**1**	X	Էյչ վի էյ սի Սերվիս ՍՊԸ	517500	621000
		2		ՆՈՎԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ	775000	775000
		3		ԿՌ Պրոջեկտս ՍՊԸ	1514167	1817000
		4		ԱՁ Գրիգոր Այվազյան	1590000	1590000
3	**621000**	**1**	X	ՆՈՎԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ	445000	445000
		2		ԿՌ Պրոջեկտս ՍՊԸ	514167	617000
		-	-	Էյչ վի էյ սի Սերվիս ՍՊԸ	1500000	1920000
4	**127000**	**1**	X	Էյչ վի էյ սի Սերվիս ՍՊԸ	105000	126000
		2		ԿՌ Պրոջեկտս ՍՊԸ	105833	127000

Որոշվեց՝

1. Դ. Մադոյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Էյչ վի էյ սի Սերվիս ՍՊԸ-ի հայտը 3-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:
3. ՆՈՎԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ-ի, ԱՁ Գրիգոր Այվազյանի և Էյչ վի էյ սի ՍՊԸ-ի 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտերը գնահատել բավարար:
4. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:
5. Արմինե Ավետիսյանին՝ ծանուցել ԿՌ Պրոջեկտս ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը 1 աշխատանքային օրվա ընթացքում:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ

ԿՌ Պրոջեկտս ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը:

Որոշվեց՝

1. ԿՌ Պրոջեկտս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

2. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց իր կողմից պատճառաբանված որոշման բացակայությունը՝ Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի (մասնակիցների) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը ստուգելու:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին :

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Արմինե Ավետիսյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Դ. Մադոյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Չիդեմյան _____

Ա. Ստեփանյան _____

Լ. Օհանյան _____

Ա. Վարդապետյան _____

Ա. Պետրոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Ավետիսյան _____